Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 224 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետությունում՝ բազմազավակ ընտանիքներին, պատերազմից տուժած ընտանիքներին, սոցիալապես անապահով ընտանիքներին, պատերազմից տուժածներին, Լեռնայի Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց, միայնակ մայրերին, զոհված զինվորների ընտանիքներին տրամադրել արևային ջրատաքացուցիչներ սոցիալական պայմանները բարելավելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Լորիկ» մարդասիրական հիմնադրամ, Հայաստանի Հանրապետության, քաղ. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Վարշավյան փողոց 26, ՀՎՀՀ՝ 00233374)
4.	Ծրագիրը կատարողը	«Լորիկ» մարդասիրական հիմնադրամ, Հայաստանի Հանրապետության, քաղ. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Վարշավյան փողոց 26, ՀՎՀՀ՝ 00233374)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	12,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության 48 ընտանիքներ, որոնց ընտրությունը կատարվում է կազմակերպության կողմից, ուսումնասիրությունների արդյունքում
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի ապրիլի 7-ից մինչև 2025 թվականի մարտի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում ծրագրվել է ձեռք բերել և տեղադրել 48 հատ արևային ջրատաքացուցիչ՝ 12,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 7-ից մինչև 2025 թվականի մարտի 31-ը: Արևային ջրատաքացուցիչները ունենալու են հինգ տարվա սպասարկման և թերությունների վերացման երաշխիք և անխափան աշխատելու համար ունենալու են թերությունների վերացման եռօրյա արձագանքման պայմանագիր:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	48 հատ արևային ջրատաքացուցչի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում 12,000,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ